

ՄԵՏՐԱՊՈԼՏՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՅ ՄԵԶ

— ♫ — ♫ — ♫ — ♫ — ♫ — ♫ —

Ա. — 1. Մեր հայրապետաց պատրիարքութեան համբաւին չափ անպատմական են այն մետրապոլտութիւնը ևս՝ զորս աւանդութիւնը հնարեց և ենթարկեց առնոց։ Աղոնց էն՝ ըստ Յովհաննէս և Օրբելեան պատմագրաց՝ Սբրաստիոյ, Մելիտինոյ և Նիքոլեասի աթոռները¹, որոնց հայոց հայրապետութեան սահմաններէն դուրս, և յունական իշխանութիւնն երրեց, ոչ երբեք հպատակ եղեր են մեզ. որով և չէին կարող ս. Ներսիսէ այդպիսի պատիւ ընդունիլ։

Ջրի է Սիւնեաց պատմչին նոյն պատիւ Մարդպետական եպիսկոպոսին վերաբեկն ես², մինչզես յետոյ Աքրահամու կարծեցեալ պատրիարքութեան առթիւ Աղուանից պատմչին հետ³ այդ միճան, կատորին զլացուած կը զնէ նոյն աստիւ ճանը⁴. Զ զարուն՝ Աքրահամու կաթողիկոսութենէն յառաջ՝ պաշտօնական զրուածոց մէջ կը յիշուին Մարդպետականը առանց այդ տիտղոսին, այլ պարզ եպիսկոպոս քառով⁵. և անոնց մին՝ թէու զորոս՝ Աքրահամու ընտրութենէն թէ յառաջ և թէ վերջ նոյն տիտղոսը կը կրէ⁶: Եւ պէտք է դիտել՝ որ «մետրապոլիտ» կոչումը ծանօթ էր Հայոց այդ զարերուն, Ազաթանգեղոսէ տրուած կեսարիոյ հայրապետին⁷, և Եղուազամի տեղապահէն՝ մերս կոմիտասայ⁸. որով թէ Մարդպետականն ալ ունենար զայն, պիտի յիշուէք: Անտեղի է նաև Օրբելեանի տեղեկութիւնը՝ թէ Վլրաց առաջնորդն ալ ստացաւ զայն մեզմէ՝ Ներսիսի օրով⁹:

1. Բգմ. 1926, 108, 105. — 2. Ասա՛ 105. — 3. Օրբել. 76. — 4. Ասա՛ 104. — 5. Գր. բարոց, 41, 70, 78, 81. — 6. Ասա՛ 76, 196. — 7. Այտա. 614. — 8. Ասա՛ 152. — 9. Ասա՛ 105. — 10. Ասա՛ 104,

Նոյնակէս է կաղանկատուացւոյն և իրեն՝ զայն Սիւնեաց եպիսկոպոսին ընծայելն ես՝ Աքրահամու կամ Ներսիսի ժամանակէն¹⁰, որոց երկուցն ալ յիշեց ինձինեան, առանց հերքելու և ոչ մին¹¹. իսկ չ. Ակիշան և Օրմանեան հաւատացին աբրահամեան զրոյցին¹²:

2. Եթէ սիսաւ ըստ ժամանակին, բայց ըստ էութեան՝ մետրապոլտական հարցը զոյութիւն ունեցեր է մեր քով, և նոյն ինցն Սիւնեաց աթոռին վրայ: Իրենց պարծաւէր պատմիչը շատ վերէն կը սկսի տեսնել զայդ, և կը զրէ այսպէս. «Գրիգորի Սիւնեաց մետրապոլտի աւելի պատիւ արարեալ սուորին Ներսիս՝ վասն երթալոյն նորա ընդ նմա ի կեսարիա, տայ նմա բազմական ոսկեթել, և կարգէ զլիւն նիր նախաթոռ պատրիարքին, որ կոչի (այսինքն կը համեմատի) ի հոռմ լեզուն պատուփրենես Հայոց մածաց¹³: Եւետոյ իրը թէ կը մոոցուի, և Աքրահամու օրով կը նորոգուի Դաւիթի եպիսկոպոսին վրայ¹⁴:

Այդ երկու տեղեկութիւնը եւս անհիմն են. և իրենց հերքումը կեցած է ամենակարճ պատասխանին մէջ. Ներսեսի օրով Սիւնեցիք զեռ եպիսկոպոս անգամ չունէին¹⁵: Իսկ յետ ունենալու, 450ին Աքրահամատու ժողովին մէջ «Անանիա եպիսկոպոս Սիւնեաց», որ նախաթոռ պիտի լինէր, տասներորդ զասուած է ըստ Եղիշէի¹⁶, և առաջն ըստ Ղազարայ¹⁷, թէպէտ երկուցն ալ աթոռոց կարգերը խստիւ պահած չեն թուիր: Դունէ նման բնօնի գումարման՝ «Պետրոս Սիւնեաց եպիսկոպոս» ութերորդ

105. — 11. Հետառ. Գ, 247. — 12. Ասա՛ 19. Այտա. 642. — 13. Օրբել. 17. — 14. Նոյն՝ 76. — 15. Ասա՛ 114. — 16. Եղիշէ 22. — 17. Փարու. 124:

նշանակուած է¹. 606ին՝ «Քրիստոֆոր Արքանեաց հպիսկոպոս» երրորդ է², և 607ին՝ յիս Արքահամու ընտրութեան՝ երկրորդ է³; Նմանապէս նոյն ըլջանի հաւաքական թղթերու մէջ Սիւնեաց առաջնորդները կամ չեն յիշուիր; Կամ յիս այլոց նշանակուած են, ու նախաթռոռն է Մամիկոնիցից եպիսկոպոս⁴: Եւ առաջին 768ին՝ Պարտաւայ ժողովին մէջ «Սադովկէ Սիւնեաց եպիսկոպոս» երրորդ է: Բոլոր այդ վաւերազրոց մէջ Օրբելեանի պատոփրսեաւնենքը ոչ նախաթռու են և ոչ եպիսկոպոսէն աւելի տիտղոս մ'ունին:

Նոյնը զգալի է նաև անոնց սեպական յիշատակազրաց մէջ: Է զարուն անցմէ մին իւր մասին կ'ըսէ. «Ի Մաթուսաղայէ Սիւնեաց եպիսկոպոսէ»: Յաջորդ զարուն Աղուանից օրիրողը Շահնդուխտ իւր նամակին մէջ կը զրէ. «Գերանելի եպիսկոպոս Սիւնեաց»: Եւ արձանագրութեանց մէջ «Սիւնեաց նախինուս» կը կոչուին ու կը կոչեն իրենց զիրենց՝ Դաւիթ 839ին, Աղուան 871ին, միւս Դաւիթ 884ին, Յովհաննէս 895ին, 906ին և 915ին⁵. և Յակոբ 920ին, 925ին և 932ին⁶: Մինչև հոս ուրեմն որ և է ժամանակակից յիշատակարանի մէջ մետրապոլութեան հետք չենց նշմարեր Սիւնեաց ըով, որ եթէ լինէր՝ զէթ պատահաբար յիշուելու էր: Ոչ Սիւնեաց աթոռակալներ և ոչ աւագանն՝ մեր մէջ անսովոր այդ պատույն զաղափարն ու մարմաջը չունին տակաւին: Եւ անոնց պատմչին սովորական մեծամտութիւնն է՝ որ լ զարուն Դաւիթ կաթողիկոսին զիտեփանս «գլուխ նախինուս», և զաթոռն Սիւնեաց՝ զլուխ ամենայն աթոռոց կացացանել կու տայ⁷: Եթէ Արքահամու օրերէն հաստատուեցաւ արդէն այդ պատիւը, ինչ պէտք կար այս երրորդ հաստատութեան: Այս իսկ ապացոյց է՝ որ պատմչին բռնազրօսիկ զիւտերն են աղոնց, և որմէ չենց կարող ընդու

նիւ ստուգագոյն տեղիկութիւնը իրենց մետրապոլութեան մասին:

Յ. Առաջին անգամ յիշեալ Յակոբայ օրով և անոր վրայ կը տեսնուի պահանջուած պատուանունդ, ըստ տեղեկութեան վաւերական ու թանկազին աղրիւրի մը, ինչպէս է Անանիա Կիր. Մոկացին, որ Սիւնեաց այդ ստաջնորդին հիս պայքարի մէջ, 958ին խնդրոյն պատմութիւնը կը շարադրէ, և այսպէս կը գրէ նոյն վիճակաւորի մասին. «Գրուին եպիսկոպոսաց տանն Հայոց, որ զմետրապօլութեան ընկալեալ էր պատիւ, և նստէր յաշնաբարին Սիւնեաց, որում անուն Յակոբ ճանաշիւր⁸: «Ընկալեալ էր՝ մետրապոլութիւնը, հետևաբար յառաջագոյն չունէր, ոչ ինը՝ ոչ նախորդները. զի աթոռին սովորական պատույ մը համար այդ բացարութիւնը չէր յարմարեր: «Ընկալեալ էր՝ կը նշանակէ նաև ինցնազիւութեամբ, ոչ բարձրագոյն իշխանութենէն:

Հայոց պատրիարքութեան և Սիւնեաց մետրապոլութեան զրոյցները ծնած տեսանը ժ զարու սեմին վրայ⁹: Յայց Սիւնեաց գեն ծանօթ չէր հասարակաց. որով Յովհաննէս պատմէն ալ, .որ կը զրէր 924ին, Անանիայէ ՅԱ տարի յառաջ, տակաւին անտեղեակ էր անոր, և նոյն պատիւը կը նշմարէր՝ ըսինց՝ ուրիշ աթոռոց վրայ: Հետևաբար նախընթաց փորձեր կամ համբաւ չունէն Սիւնից իրենց մասին: Երբ Անանիա 914ին կաթողիկոս եղաւ, հայրապետական աթոռէն պատամբած գտաւ զիակոր, որ ուրիշ բանի մը հայ եպիսկոպոսաց հետ քայլեկզունեան զրօշին ներքեւ անցած էր, և յարած Աղուանից կաթողիկոսին, ուսկից մեռնն ալ կ'ընդունէր¹⁰: Կրնանց հետեցնել՝ թէ այդ բաժանման հետ ստանձնած էր նա մետրապոլիտ կոչումն ալ, յեցած իւր համախոն եպիսկոպոսաց և իւր աթոռին նըսպատաւոր նորածին համբաւին վրայ. և

1. Գր. բարուց. 73: — 2. Ազգ. 146: — 3. Ազգ. 151: — 4. Ազգ. 41, 48, 52, 62, 76, 196: — 5. Օրբել. 87: — 6. Ազգ. 120: — 7. Ազգ. 149, 158,

151: — 8. Ազգ. 163, 168, 181: — 9. Ազգ. 195, 199, 185: — 10. Օրբել. 100: — 11. Արքու. 1897, 190: — 12. Ազգ. 108 և: — 13. Արքու. 180:

թէ այդ նորամեռութիւնը պատահեր է յետ 932 թուականին, ուր զեր ռեփլիկոպոս» կ'անուանէր ինք զի՞նըը: Ալլդ Մոկացին կը, պատմէ՛ թէ չշանդուղմելով հերծուածին, եպիսկոպոսօց ու զլխաւոր վանականներով Սիւնեաց աշխարհը կ'երթայ, ուր Յակոր հարկալուած՝ առ երես հնագանդութիւն կը ցուցնէ, և յետոյ կրկին կ'ընդդիմ, որոյ համար կաթողիկոսը կը նզովէ զայն 949ին¹:

4. Յակորայ մահուամբ 950ին՝ իրաց վիճակը կը փոխուի: Այսանիա բոլորովին կը նուանէ զի՞նինս, և անոր յաջորդ կը ձեռնադրէ զվահան, վերջնէս ձեռնազիր առնլով՝ թէ «Զիք իմ և որ յետ իմ գաւլոց են՝ ի ձէնջ մեծարանաց խնդիրս, ոչ խաչ, ոչ Փաւազան, ոչ բազմական և ոչ այլ բարձրութիւն ինչ»: Բայց միայն որ զինչ ձեր աստուածարար կամսդ կամի և տայր, այն է իմ փառք և մեծութիւն»: և ինք զի՞նըը կը կոչէ լոկ «Այսանիա եպիսկոպոս», ինչպէս կ'ըսէ հոն անոնց Պուանշիր իշխանն ալ: «Եթէ որ յիշխափուսաց մերոց որ զկնի մեր գան²: իւ այսպէս Սիւնեաց աթոռը կը զրկուէր իւր յանկարծահաս մետրապոլութենին:

Իրակոս Գանձակեցին կը սփալի՛ զրելով թէ Այսանիա և ձեռնադրեաց յագէն նոցա զմի ոմն արքպահուպոս, որ յառաջն էր Սիւնեաց եպիսկոպոս. զայն ի պատիւ արարեալ իշխանացն Սիւնեաց, հրամայաց խաչ տանել առաջի արքեպիսկոպոսին Սիւնեաց ուր և երթիցէ³: Յայսնի է որ չըր տեսած Մոկացույն գրութիւնը, և ի լրոյ կու տայ այդ տեղեկութիւնը: Արդարք 998ի կոսակի մը մէջ կը յիշուի Վահանայ յաջորդներէն մին՝ անշուը տիտղոսով. «Յակորայ Սիւնեաց եպիսկոպոսի»: ինչպէս նաև ասոր յաջորդը, «Գրիգորի Սիւնեաց եպիսկոպոսի»:

5. Վերջնոյս յաջորդին Յովհաննու օրով կրկին արծարծուած կը պատմուի Սիւնեաց պատմէչն՝ մետրապոլուտական հարցը:

Այդ պահուն հայրապետական աթոռին վրայ կը նստէր Սիւնեայ մենաստանին հայրը Սարգիս, որ միասին տարած էր հոն վանականի վարքը, տարածն՝ ու պարզմուութիւնն ալ: Սիւնեաց եպիսկոպոսն ընդ հակառակն խորամանկ մարդ, ուզեց շահագործել զայն: Հազիւ ընտրութեած, փորձեց ուղղակի մետրապոլիտ ձեռնադրուի: Եւ պատրաստեց ու տարաւ անոր առջն թափեց պատկառելի թիւ մը նամակաց՝ նախորդ հայրապետաց կողմանէ, «սկսեալ ի սրբոյն Գրիգորէ Լուսաւորչէ և յորդոց և ի թոռանց իւրոց, որոց նամակն մինչ ի սուրբն Սահակ յունարքէն գրով էր զրեալ, և իւրաքանչիւր մատանի կապարեայ կնքով եղեալ ի վերայ, և անտի հայերէն զրով մինչեւ յինանիա, և յետ Այսանիայի զրեալ մինչեւ ի մեզ՝ բայց միայն յինանիայէ.... Եւ էր բովանդակն ծիծ նամակ... և այն երկար բանիւր և հրանոսան նզովիւր զրեալ, զի մի՛ ոք իշխեսցէ պակասակուցանել ի սահմանադրեալ վիճակէ սոցա և կամ նուստացոցանել և բառնալ ի պատույ և յաստիճանէ սոցա»:

Կաթողիկոսին խօսքերն են ասոնց, անոր շրջաբերականէն՝ զրուած 1006 թւականին, զոր Օղբեկան յառաջ կը բերէ: Գեղամայ լճին նգնաւորը, որ ի վիճակի չէր ու պատմութիւնը ցննելու, ոչ թղթոց հինն ու նորը զատելու, և ոչ անոնց չափանցնութիւնը զգալու, հիացաւ մաց այդ գւաւեղբարց առջն: և երկուցեալ կ'ըսէ, յայնափիս յառաքելական հարցն հրամանէ,.. ձեռնադրեցաց զաա (Յովհաննէ) ըստ առաջնին աթոռակալացն մետրապոյիս Սիւնեաց, և հաստատեցաց վերըստին զնոյն վիճակ երկուտասան գաւազանին յաթոռդ նախազահ և ի տունդ Սիւնեաց եպիսկոպոսի»:

6. Սակայն դժուարին կը թուի հաւանիւ շրջաբերականիդ վաերականութեան, հետեւեալ պատճառներով. ա, Սիւնեաց պատ-

1. Անդ. 181-89. — 2. Անդ. 141. — 3. Անդ. 142. — 4. Կիրակ. 49. — 5. Օրբել. 218, 215. —

6. Անդ. 260. — 7. Օրբել. 226.

միշտ, որ գեղեցիկ սովորութիւնն ունի իւր աթոփին վերաբերեալ ամէն վաւերազիր հիւսել իւր զրբին մէջ, այդ ծճ պատկառ ունի նամակներէն ոչ մին կոշած է, ուստի և ոչ տեսած զանոնց, որ եթէ կային իւր աթոփին մէջ միայն կրնային պահուիլի, ուսկից և տարուած էին ցուցուելու հայրապետին: — բ. Յիշեալ Յովհաննէս մետրապոլիտը կը մոռնայ այնցան նաև բազիտութեամբ ձեռք բերած պատիւը, և 1026ի կտակին մէջ կը զրէ, «տեառն Յովհաննիսի Սիհնեաց Կոփակոսին»: զոր կը զործածէ նաև հետագայ յիշատակարանաց մէջ³, ինչպէս կ'ընէ զեռ իւր յաջորդ Գրիգոր և՝ 1080ին և յետոյ⁴: — զ. Գրիգոր Մաղիստրոս նոյն Յովհաննիսի զրած թղթերուն մէջ զայն կը շողոմէ լաւագոյն տիպուսներով, արքեպիսկոպոսի կամ աստուածապատի հոգեւոր տէր⁵, և կ'անգիտանայ ինքն ալ անոր մետրապոլիտիւնը կրնայ ուրեմն Սարգսի իւր ձեռքէն ելած շրջաբերականը տեսած շինուել բնաւ, թէսէտ Հ. Ալիշան և Օրմանեան հաւատացին անոր⁶:

7. Եթե յիշեալ Գրիգորի մահուան՝ Սիհնեաց աշխարհն ու աթոռ կ'անշըանան հեթանոսաց աւելումներէն, և կը մոռացովի — եթէ զեռ կը մնար — անոնց մետրապոլիտեան յիշատակն անգամ, և իւրենց աթոռը կը մտնէ նորաստեղծ արքեպիսկոպութեանց կարգին մէջ, որով 1179ին Հռոմէկայի ժողովին մէջ Սիհնեաց առաջնորդը Ստեփանոս՝ արքեպիսկոպոս կը ասորազըէ, և իւր աստիճանակցաց մէջ ոչ թէ «նախազահ», այլ եօթներորդ է⁷:

Աւելին կայ: Ն. Լամբրոնացին 1177ին և Մ. Գոշ 1184ին երբ նուիրապետական ասհմանները կու տային, չէին գիտեր՝ թէ Հայաստան մետրապոլիտիւն մ'ունէր, և աստիճանիս նկարագիրն առին յոյն և կեղեցիէն: «Գործ է նոցա, կ'ըսէ աղոնց

առաջինը, ձեռնադրել եպիսկոպոսս, և օրհնել զմիւռոնն... և երեք մետրապոլիտ ունին իշխանութիւն ձեռնադրել զարքեապիսկոպոսս իւրեանց⁸: Նոյնը զրեթէ բառ առ բառ կը կրկնեն նաև Գոշն և նոյն ինցն Սիհնեաց պատմչը⁹: Բայց մեր ոչ երեք մետրապոլիտ ունեցած ենք, և ոչ Սիհնեաց վիճակաւողը իւրո՞ներ է երբեք եպիսկոպոս կամ մեռոն օրհնել, ինցն Օրբելիան կը մոռնայ անգամ «մետրապոլիտ» տիտղոսը՝ երր կը յիշէ իւր նախորդները, և զանոնց պարզապէս եպիսկոպոս կ'անուանէ¹⁰:

8. Իրեն պահուած էր՝ առաջին մետրապոլիտէն 336 տարի վերջ վերստին արձարձել մետրապոլիտական հարցը, և նստիլ՝ իւր բացատրութեամբ՝ «ի կրկնանորդ զահ մետրապոլիտեան տանս Սիսական¹¹»: Իւր հայրը Տարսային իշխան՝ գորաւոր մարդ էր, և կը սիրէր «ի բազաց մինչև Ցիլյարատս¹²»: Ստեփանոս ամուր թիկունը ունէր ուրեմն, և 1286ին՝ «Ճողովեալ, կ'ըսէ ինքնին, մերց եպիսկոպոսաց առ հայրն իմ, հրաւիրեցին զիսն երթալ ի կիլիկիա և «առնուլ ձեռնադրութիւն մետրապոլիտեան ի վերայ աթոռոյն Սիհնեաց»¹³: Կամ ուրիշ բացատրութեամբ՝ «վասն նորոգմն սուրբ աթոռոյն հին պատուոյ և աստիճանին՝ որ բարձեալ էր ի վաղինոց՝ վասն աւելման և կործանման աշխարհին»¹⁴:

Կ'երթայ ի Սիս, ուր եպիսկոպոսական աստիճանին հետ՝ Լկոն արքայ և նորընտիր կոստանդին թէ կաթողիկոսը զիս «պատուեցին, կը յարէ, մեծամեծ պարզօց և կրկն թագիւ կարգեալ յաստիճան մետրապոլութիւն, և կոչիլ պատօնքունց (որատօքորոնդիչ = նախամիծար) պատրիարքին Հայոց, այսինքն նախաթոռ լինել և զլուի ամենայն եպիսկոպոսաց Հայոց»¹⁵: Իւր գրոց յիշատակարանին մէջ

1. Օրբէ. 225. — 2. Նոյն՝ 282. Ական. 221. — 8. Օրբէ. 287-48. — 4. Մագ. Թոր. 86, 46. — 5. Ական. 19. Աքագ. 1164. — 6. Ենոր. Ընդ. 199. — 7. Լ. Պար. 88. — 8. Մի. Դաստ. մի. Օր.

բէ. 79. — 9. Օրբէ. 249-58. — 10. Նոյն՝ 253. — 11. Նոյն՝ 849. — 12. Նոյն՝ 850. — 13. Նոյն՝ 818. — 14. Նոյն՝ 851.

ինք զինքը կը սահմանէ՝ « եպիսկոպոս Արևնեաց երկուտասան զաւառաց. նաև ըստ ներող կամաց նորին (Քմի.) նոտեալ ի զահ մետրապօլիտեան տանս՝»։ Շեղադրուած կը կին տիտղոսները կը կրկնէ նաև Տաթևոյ 1295ի արձանագրին մէջ, կը բանգակէ նոյն եկեղեցւոյն զանգակին վըրայ⁹, և կը զետեղէ մինչև իւր տապաշացարին երեսը. « Այս է շիրիմ Հանզ զբստեան մեծի մետրապոլիտի Արևնեաց Մտեփանոսին»։ Եւ այս ամէնը մեր ուշադրութիւնը կը հրափրէ իւր ամբատանութեանը վրայ անձին դէմ՝ թէ « Միայն առօրինյ փառօքն հեշտացայ ախտաւոր մոտոց»։

Գ. Պատմչիս վկայութիւնն իւր մետրապոլիտեան մասին՝ դրական է անկասկած, թայց արդեօց մեծն Լոռն ու կոստանդին խսկակէն տուբին իրեն այդ կոչումը, թէ իւր հայրն ու նահանզն ախրոժեցան այդպէս անուանել զինցն իրեն հետ, և կիլիկիա առ ակնածութեան չըողոքեց, չունինց այլուստ ուրիշ պատցոյց՝ թայց միայն իւր վկայութիւնը. Եթէ հաւատանց իրեն, թագաւորն ու կաթողիկոս նաև «զրին շրջուրեական համակ ոսկեզիր մազաղաթաւ, մեծարզի բանիւց հաստատուն պայմաննաւ նորոգելով զպատիւ աթոռոյն զմետրապոլիտեանն»։ և զոր չվարանեցա ընդունիլ Օրմանեան¹⁰, թայց մէր հոս զարձեալ կը ստիպուինք հարցնել, զարիրով ընդհատուած և այդքան բաղձանոր ձեռք բերուած պատույ մը պաշտօնական և յաւերժացուցիչ վկայագիրն ինչպէս յառաջ չի բերեր Օրբելեան իւր պատութեան մէջ, ուր զանց չէ ըրեր Սարսի շրջաբերաւ, կանը, և նոււազ կարեռոները՝ կտակներն անգամ:

Այդ պատիւն անհրաժեշտ չէր՝ Գր. Անաւարզեցւոյն դէմ ծանօթ խրոխտ դիրքը բռնելու համար, և արեւելեան եպիսկոպոսաց ու վարդապետաց զլուխ անցած՝

բողոքազիր զրելու անոր ծիսական նորածեւութեանց դէմ¹¹, Միծ նահանգի մ'իշխանին որդին էր նա, և այդ արդէն բարւական էր իւր ձայնը զօրացնելու: Այս պարազայն նոյն կաթողիկոսն ինընին կը հաստատէ առ Հեթում նամակին մէջ, ըսելով. «Օրպելին՝ որ է Արևնեաց արմիեկիսիպոսու, որպէս հոգկոր իշխան գլուխ, նոյնակէ և մարմեատոր». ասոր համար, կը յարէ, ծանուցի իրեն ինչ ինչ արագողական փոփոխութեանց խնդիրը¹²: Ուշագրաւա է՝ որ փոխան մետրապոլիտի՝ արակիսիկոպոս կը կոչէ զայն, իւր նախորդուն շնորհուած պատիւ մ'ինչն զլանար անոր, եթէ ունէր, երբ արհեկիսիկոպոսով և իւր գործով ալ արդէն կը մեծարէր զայն, ոչ թէ կ'արհամարհէր, նոյնպէս կը վարուն իրեն նկատմամբ յիշատակազրե և. վարդանայ իրեն համար զաղափարուած օրինակ մը 1297էն՝ երկու անգամ կը կոչէ զինց՝ «զտէր Ստեփանոս արհեկիսիկոպոս»։ և թովմայի պատութեան զրիչ մը կ'ըսէ՝ «տրհական առարձանի արժանացելոյ տեսոն Ստեփանոսիսի¹³»։ Տեղի կայ ուրեմն կասկածելու մետրապոլիտիւնը Սսէն ընդունելուն վըրայ, թէպէտն ուզեց կրել զայն միշտ:

10. Ստեփանոսի յաջորդեց իւր հօրեղորօք Թոռն Յափշանէս, և նախորդին դիրքը բռնեց կոստանդին Բ կաթողիկոսին դէմ, որ ստիպողական կ'տզէր ընել սուրբ բաժակին ջրախառնութիւնը և լիննդեան զեկ. 25ի տօնախմբութիւնը՝ Արևնեաց վիճակաւորն իրեն և անոր աջ բազուկ Զարարիա ծործորեցւոյն զրած զոյգ թղթերով¹⁴ հակառակեցաւ այդ նորութեանց, և մերժեց մեռոնն ալ՝ զոր այդ պայմանաւ միայն տալ կ'ուզէր հայրապետը: Ասկայն չունի կամ չի ցուցներ պատմչին մարմաժը՝ մետրապոլիտ տիտղոսով զարդարելու իւր անձը: Եթշեալ թղթերուն մէջ կը զրէ՝ «մեց նոււաստ նվիսկուպոսի Արևնեաց Տէր

1. Նոյն. 368. — 2. Արևե. 234, 236. — 3. Անդ. 181. — 4. Օրբէլ. 350. — 5. Նոյն. 318. — 6. Աւտա. 1701. — 7. Նոյն. 892-99. — 8. Գալա-

նոս, Ա. 441. — 9. Հաւաց. յորի. — 10. Արևե. 95. — 11. Գրէ. թ. 1261 Ա. Պատ.

թովհաննէս և տէր Ստեփանոս» . կամ «նուաստ եղիսկոպոս Սինեաց Օքպելի թովհաննէս» . և իւր 1322ի արձանագրին մէջ՝ «Այսնեաց արհիեպիսկոպոս» կը կոչուի : Սակայն ուրիշներ՝ Սինեաց պատմընին վերաստեղծած շրեզագոյն տիտղոսով կը շողոմին զայն, զոր օրինակ՝ արձանագրի մը կ'ըսէ . «առն իմաստից և հանձարոյ Արքել թովհաննէս հոչակաւոր մետրապոլիտ Սինեաց» . և 1321ի յիշատակագիր մը՝ «աստուածապատիւ և առաքելաշնորհ արհիեպիսկոպոսի մեր մէջ թովհաննիս» :

Պատմչին ախտորժակն ունի ասոր յաջորդը Սարգիս, որ սեպական յիշատակարանի մը մէջ 1337ին՝ իւր մասին այսպէս կ'ըսէ . «արժանապատիւ և բազմերջանիկ արհիական բաւչապետս և մետրապոլիտ մնձ Հայոց, մանաւանդ տանս Սինեաց, և պրօտօքոնտէս սուրբ Հայրապետանցիս Տաթևոյ և աշխարհին Սիսակայ» . կամ «մնձ մետրապոլիտս տէր Սարգիս» . Օրբելիաննէն ուսած ձնել, զորս կը կրինէ ուրիշ յիշատակագիր մ'ալ, նոյն տարրոյն անոր համար զրած կցորդին մէջ . «մնձ և ամեներջանիկ մետրապոլիտն և արհիական զլուխն այստ նահանգին տէր Սարգիս» . մինչ Երկրորդ մը 1333ին կ'ըսէ լոկ՝ «յարհիեպիսկոպոսուրեան մերոյ տէր Սարգսի» : Սակայն թիչ յետոյ կը սկսին բարբարոսաց յարձակումներն ու աւերը Հայաստանի վրայ, որոնք կը վրարեն իսպատ մետրապոլիտեան բազմանը Սինեցւոց սրտէն, և կոչումը՝ զըրչէն :

(Տարայարիլի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

1. Սիստ. 181. — 2. Անդ. 194. — 3. Հաւաք. յոտի
- 4. Անդ. — 5. Անդ. Սիստ. 20. — 6. Հաւաք. յոտի:



ՀԱՅ ԶԵՌԱԳԻՐ ՄԸ

ՀԱՅՐ ՄԱՉՏՈՑ:

ՀՅՈՒՅՆԻ ԲԱԿՈՒՄԻՆ ԲԱՀԻ - 1120. - ՔՐԻՄԻՆ 1671.

Թուղրը. — ՅՕՅ ՄԵԺՈՒՐԻՆ. — 6×18×26 Հրամթիւ: Գրուրիւն. — Երկիւն. 6×18, Տողիր. — Խրամանչիւր սիւսակն ունի 28 տող, Նիւր. — Մազաղպթ⁹, ընտիր անսակ, հաստ և բարակ Թերթիւր խառն, գեղնաւուն և ողորկ: Լազիր. — Կաշեպատ ասխտակ: Պահպանակ. — Զուի: Հանգանանակ. — Եատ լար ինաւարով պահուած: Գիր. — Բոլորզիր. զլիատառերը երկաթազիր թանաքար. — Ան. գիւարկութիւն: Ներն և գիւատառերը կարմիր թանաքով գրուած: Զարդանկարներ. — 2, Բ. «ՅՈՒԱՆԻՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԱԳԵՍ Հայոց կթղկսի» պատկերը, պատարազիչ զգեստներով: Խնադերձեալ, զլիուն գրած՝ թագը: 3, Ա. Խորանկար, ներդաշնակ զոյներով իրար մէջ ազուցուած զանազան ձևեր, որոնցմէ կազմուած են հայկական խաչեր: «Բարեխօսուրիամբ» բառը գրուած է լատ սիրուն թոշնագրերով: Երկար և յաջող լուսանցքազարդ մը կը գրաէ էջի ձար կողմը: Սրբոց գելքերը թուում՝ 8, Լուսանցքազարդեր՝ 142: Ճակատագրուեր՝ 34, Մազկազեր և թոշնագրեր՝ 180: Դատարի էջ. — 2, Ա. 69, Բ. «Բիուական. — ՈՒՅՆԻ-1120 = 1671: Գիրիւ և ներկիւ. — Ասուածատուր երէց: Ժեղ. — Կոտուանդինուպօւիս «ի դուռն Սուրբ Աստուածածին»: Այտացող. — «Ազուկեցի թումանչանից Հախումի որդի խոճայ բուժիարձն: Բովանդակալուրիմ. — Հայր Մաշտոց: Մամեր Յիշատակազրուրիներ. — 1, Բ. «Եւ զեղկելի գծուս ազատմէ յիշել և զուք յիշեալ լիշիք ատաշի Գրիստոսի Աստուեց ամէն»: 146, Ա. «Զգորգ սորա զԱստուածատուր

1. Թաւրիզեցի ծերունազարդ ազգային մը — Պրե. Անդրէ Գուրգենական վերինա Աստրատականի Հայոց Առաջնորդ Գեր. աէր հներսէն Արեակ. Մելիք-Թանգեանին յանձնեց «Հայր Մաշտոց» սնունդի մազաղպթայ ընտիր ձեռազիր մը, ինդրիլուց որ իւր կողմէ իրը նուէր ուղարկուի Մայր Ալու. Ա կը միանի Մասնաշարանին: Հորին բարձր Սրբազնութեան բարեհամ Բոյլատուութեան, սաստիամակրութեան նեթարկեցի «Հայր Մաշտոց մի բռվանդակութեանը, կազմելով այս յօդուածը «Բաղմազէս» Ալոազրի համար:

2. Մազաղպթէ Թափուած և Պուութ զրուած տեղերն են էջ 60-69, և էջ 102-104, Այս թերթերուն վրայ գրուած են լրացուցիչ նիւթերը: